

ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE
1500 L.Ո. 76ԲԳ. ՏԱՐԻ, ԹԻՒ 136 (21478) ՉՈՐԵՔԱՐԹԻ, 20 ՕԳՈՍՏՈՍ 2003 10 ԷՁ

ՖՐԱՆՍԱԿՐԱՆՅԱԿ ԿԵԹՈՅԻ ԵՆԹԱՐԿԵԼ ԼՈՔԸՐՊԻԻ ԳԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ

Ֆրանսայի արտաքին գործոց նախարարության մեկ քանքերը երկկ յայտնեց, թե անհասանալի է, որ Ֆրանսա ՄԱԿի Ապահովության Խորհուրդին մեջ գործածե վեթոյի իր իրաունքը Լիպիոյ դէմ հաստատուած պատժամիջոցներու ջնջման օրինագիծին պարագային:
Բրիտանիա Երկուշաբթի օր Խորհուրդին ներկայացուցած էր օրինագիծ մը, որ կը ջնջէր 1988ին 270 ճամբորդ փոխադրող «ՓԱՆ ԱՄ» օդանաւին ուժեղացումը հետեւանքով Լիպիոյ դէմ հաստատուած պատժամիջոցները: Այս քայլը կը յաջորդէ Լիպիոյ համաձայնութեան՝ 2,7 միլիոն տոյար վաճարելու փոխարէն ընտանիքներուն, ստանձնելով դէպքին պատասխանատուութիւնը:
Ֆրանսա կը պահանջէ, որ Լիպիա 1989ին ֆրանսական օդանաւի մը ուժեղացումը պատասխանատուութիւնը ստանձնէ եւ կատարէ նոյնանման հատուցում մը:

ԻՍՐԱԵԼ ՍԱՌՅՈՒՑ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՆՉՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ ՑՆՑԵՑ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԸ ԵՒ ՊԱՏՃԱՍԵՑ 18 ՁՈՂ, ԱՒԵԼԻ ՔԱՆ 100 ՎԻՐԱՒՈՐ

Երուսաղէմ երեկ երեկոյեան, տեղական ժամով ժամը 9:00-ին, ականատես եղաւ պաղեստինեան անձնասպանական գործողութեան մը: Իսրայէլեան փոխարար կառք մը թիւրախ ընտրած



գործողութիւնը պատճառեց 18 վրահ եւ 105 վիրաւոր, յայտնեց իսրայէլացի պաշտօնատար մը: Երուսաղէմի արեւմտեան բաժինին մէջ, «Չէյթուն» պանդոկին մօտ կատարուած գործողութեան պատասխանատուութիւնը ստանձնեց իսլամական ժիհատ կազմակերպութեան պիւնտրական թելը, որ նախապէս յայտարարած էր, թէ պիտի հակադարձեանցեալ շարք իր պատասխանատուութիւնը մէկուս սպանութեան:

Գործողութեան էտք, պաղեստինցի պաշտօնատար մը յայտնեց, թէ Իսրայէլ ստեղծուած է Այսրյորդանիայի երկու քաղաքներու ապահովական պատասխանատուութիւնը պաղեստինեան կողմին փոխանցելու գործողութիւնները: «Իսրայէլ ջնջեց բոլոր քանակութիւնները եւ կասե-

ցուց Քալքիլիայէն եւ Երիթրովէն իսրայէլեան ուժերու հեռացման բոլոր միջոցառումները», յայտնեց պաղեստինեան իշխանութեան ապահովական հարցերու նախարար Մոհամէտ Տահլանի քանքերը:

Իր կարգին, Համասի քաղաքական ղեկավար Ապտալ Ապիպ Ռանթիսի յայտնեց, թէ Երուսաղէմի գործողութիւնը հետեւանքն է պաղեստինեան շրջաններու մէջ իսրայէլեան բռնագրաւող ուժերու ուժիւններուն: «Պաղեստինեան բոլոր կազմակերպութիւնները՝ իսլամական թէ ազգային, յստակ դարձուցած են, թէ պիտի հակադարձեն Իսրայէլի կողմէ հարեկչական որեւէ արարքի», յայտնեց Ռանթիսի:

Համաս աւելի ուշ միանալով իսլամական ժիհատի ստանձնեց գործողութեան պատասխանատուութիւնը եւ կասե-

ցուց Քալքիլիայէն եւ Երիթրովէն իսրայէլեան ուժերու հեռացման բոլոր միջոցառումները», յայտնեց պաղեստինեան իշխանութեան ապահովական հարցերու նախարար Մոհամէտ Տահլանի քանքերը:

Պաղեստինեան իշխանութեան վարչապետը դատապարտեց անձնասպանական գործողութիւնը: Խաղաղութեան գործընթացը վերականգնելու եւ յառաջ մղելու նպատակով՝ Իսրայէլ եւ պաղեստինեան իշխանութիւնը անցնող օրերուն կը շարունակէին բանակցութիւնները՝ այսրյորդանեան երկու քաղաքներէ իսրայէլեան ուժերը հեռացնելու ծրագիրին մասին:

Խաղաղութեան գործընթացը վերականգնելու եւ յառաջ մղելու նպատակով՝ Իսրայէլ եւ պաղեստինեան իշխանութիւնը անցնող օրերուն կը շարունակէին բանակցութիւնները՝ այսրյորդանեան երկու քաղաքներէ իսրայէլեան ուժերը հեռացնելու ծրագիրին մասին:

ԹԱՂԱ ԵԱՄԻՆ ՌԱՄՏԱՆԸ ԶԵՐԲԱՎԱԼՈՒԵՑԱՒ

ՊԱՂՏԱՏԻ ՄԷՋ ՄԱԿԻ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ ԹԻՐԱՆ ԸՆՏՐԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ ԽԼԵՑ 16 ՁՈՐ

Ուժգին պայթում մը երեկ յետմիջօրէին ցնցեց Պաղտատի մէջ ՄԱԿի կեդրոնատեղին, որ թիրախ դարձաւ ուժեղացումը: ՄԱԿի պաշտօնատարներ եւ ակնատեսներ յայտնեցին, որ ակնատեսներու միջոցով մը ստուգուած է շէնքի մուտքին՝ զօրաւոր պայթում մը յառաջացնելով:

Յարձակումը, որ ըստ նախնական տրեւելներու անձնասպանական գործողութիւն մըն էր, խլեց 16 վրահ, եւ աւելի քան 50 վիրաւոր: Չոհերու շարքին է իրաքի մէջ ՄԱԿի գլխաւոր ներկայացուցիչը՝ Սերժիօ Վիերա տը Մելլօ: ՄԱԿ պաշտօնական հաղորդագրութեամբ մը հաստատեց Մելլոյի մահուան լուրը: Ռմբահարումէն ետք Մելլօ որոշ ժամանակ մնացած էր շէնքին փլատակներուն տակ եւ բռնաբանուեց իսրայէլի միջոցով հաղորդակցութեան մէջ էր իր խորհրդականներէն՝ Ղասսան Սալամիի (Լիբանանի մշակոյթի նախկին նախարար) հետ:

Դէպքէն անմիջապէս ետք շտապ օգնութեան խմբակներ եւ իրշէջներ մեկնեցան դէպքի վայր, նախաձեռնելու համար կիսափուլ շէնքի փլատակներուն տակ մնացողներու փրկութեան: ՄԱԿի քանքեր Ֆրէտ Էքհարտ յայտնեց, թէ յստակ չէ, թէ ՄԱԿի Պաղտատի կեդրոնի 300 աշխատակիցներէն քանի՞ աշխատակից շէնքին «Քանալ» պանդոկին մէջ կը



գտնուէին ուժեղացումը պահուած:

Ոչ մէկ կողմ ստանձնեց գործողութեան պատասխանատուութիւնը: Հաղորդուեցաւ, որ վիրաւորներու շարքին է նաեւ իրաքի մէջ ՄԱԿի քարիւղի փոխարէն սննդանիւթ օրագիրին տնօրէն՝ Պեռնու Սեւան:

ՄԱԿի Պաղտատի կեդրոնատեղիին դէմ գործողութիւնը դատապարտուեցաւ Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի, Բրիտանիոյ եւ

այլ երկիրներու, ինչպէս նաեւ Եւրոպական Միութեան, Ռաբա-

Նի կողմէ:

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան խստօրէն դատապարտեց արարքը, յայն նկատելով «ոճրային եւ չիրահուած արարք մը հանդէպ մարդոց, որոնք իրաք մեկնած էին ունենալով մէկ նպատակ՝

օժանդակել իրաքցի ժողովուրդին անկախութեան եւ ինքնիշխանութեան վերականգնումին»:

Լիբանանի նախագահ Վալիդ Քաուպու խստօրէն դատապարտեց Պաղտատի մէջ ՄԱԿի կեդրոնատեղիին ուժեղացումը: Ան դիտել տուաւ, որ կեդրոնատեղիին եւ ՄԱԿի



Սերժիօ Վիերա տը Մելլօ

կան Լիպիայի եւ ՕԹԱ-

Շարք՝ էջ 10

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ՀԱՅԱՍՏԱՆ Կ ԱՅՅԵԼԷ

Չորսօրեայ այցելութեան մը համար այսօր Հայաստան կը հասնի Եւրոպական Խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի քննիչ յանձնախումբը: Հայաստանի Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու ժողովի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախատանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Սրմէն Ռուստամեան անդրադարձնալով Եւրոպացի պատուիրակներու այս այցելութեան ըսաւ, որ Հայաստան պէտք է բացատրութիւն տայ այցելուներուն, Եւրոպական Խորհուրդի նկատմամբ իր ստանձնած որոշ պարտաւորութիւններ տակախ կատարած շրջալուրն համար:

«Քննիչ յանձնաժողովին նպատակը մեր պարտաւորութիւններու կատարման ընթացքը վերահսկելն է», ըսաւ Ռուստամեան, աւելցնելով, որ այս առումով Հայաստան կը դիմագրաւէ որոշ լուրջ խնդիրներ: «Առաջին հերթին կայ մ ա հ ա պ ա տ ի ծ ի

չնջման եւ անոր առնչուող օրէնքներու խնդիրը, ինչպէս նաեւ ընտրական համակարգի եւ սահմանադրական բարեփոխումներուն առնչուող հարցեր», նշեց Ռուստամեան: Ան տեղեկացուց, որ այս յանձնախումբը իր այցելութեան արդիւնքներուն մասին Սեպտեմբեր 10ին Փարիզի մէջ տեղեկագիր պիտի ներկայացնէ Եւրոպական Խորհուրդի համապատասխան մարմիններուն: Ռուստամեան աւելցուց, որ թէ՛ վերջերս Հայաստան այցելուներու հետ «Ակոյի խմբակ»ի եւ թէ քննիչ յանձնախումբի եզրակացութիւններէն կախուած է Եւրոպական Խորհուրդի խորհրդարանական վեհաժողովին մէջ Հայաստանի խորհրդարանի նոր պատուիրակութեան լիազօրութիւնները ճանչնալու հարցը:

Հայաստան այցելող պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմեն իսլամաւոր պեկուցողներ՝ Եժի Եասկերինա, Ռընէ Աստրէ եւ քարտուղար Վալերի Կլամէր, հանդիպումներ պիտի ունենայ Եւրոպական Խորհուրդի անդամ երկիրներու՝ Հայաստանի մէջ դեսպաններուն, ԵԱՀԿի գրասենեակի ղեկավարին, եւ միջազգային կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ: Քննիչ յանձնախումբը իր այցելութիւնը պիտի եզրակացնէ նախագահ Ռուպէրթ Քոչարեանի հետ տեսակցութեամբ:

ՊՈՒՐՈՂ ՀԱՄՈՒՏԻ ՄԷՋ ԲԱՑԱՌԻԿ ԱՌԻԹ ԶԱՏՈՒԿ ԳԻՆԵՐՈՎ ԾԱԽՈՒ ԵՆ.-

ԱՐԻՆ - ՀԱՄԱԼԻՔ

- ▶ Խանութներ 30 եւ 40 քառ. մեթր
- ▶ Սրահներ 175 եւ 200 քառ. մեթր


ԱՐԱԳԱԾԻ ԾԷՆՔ

- ▶ Խանութներ 30 եւ 50 քառ. մեթր
- ▶ Մթերանոց 300 քառ. մեթր

ԱՅԵՏԻ ԾԷՆՔ

- ▶ Գրատեղակ 80 քառ. մեթր

3 աւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 03 / 618806 փիլին:



ՖԱՐՅԱԹ ԿԸՆԴԳՈՒՄ
ՄԻՋԱԿ ԴԱՍԱԿԱՐԳԻ
ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Գաղթականներու
է գաղթականութեան
հարցերու նախարար
Ապտալլա Ֆարիաթ
երկ կատակերասփիւ-
ռի «Նիւ. Թի. Վի.» կա-
յանին հետ ունեցած
իր հարցապարոյցին ըն-
թացքին յայտնեց, որ
նախարարութիւնը
հանգամանօրէն
քննարկած է պատե-
րազմի արդիւնքները
է փորձած է ջնջել վա-
տնաբ, կառչած մնալով
հաշտութեան:

ԱՆՋՆԱՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ ՑՆՑԵՑ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԸ...

Իսրայէլի ճայնա-
փիւռի կայանը, որ կը
մէջբերէր Իսրայէլի
պաշտպանութեան
նախարար Շաուր Մո-
ֆապը, հաղորդած էր,
թէ հրէական պետու-
թիւնը պատրաստ է հե-
ռանալու Երիզովէն եւ
Քալիֆիայէն՝ պա-
տնաբ յանձնելով պա-
ղեստինեան իշխանու-
թեան: Մոֆապ ըսած
էր, որ Իսրայէլ պատ-
րաստ է պարպելու յիշ-
եալ քաղաքները, պա-
մանաւ որ պաղեստին-
ցիները արգիլեն ահա-
բեկչական արարքնե-
րը այդ քաղաքներէն:
Մոֆապ ըսած էր նաեւ,
թէ Երիզովէն եւ Քալի-
ֆիայէն ետք, Իսրա-
յէլեան ուժերը պիտի
հեռանան նաեւ Թուր-
քարմէն եւ Ռամալլա-
յէն:

Շարունակուած Ա. Էշէն
քովն ու Քալիֆիայի
յառաջիկայ երկու օր-
ւան մէջ պիտի յանձն-
ուին պաղեստինցիներ-
ուն: Պաշտպանու-
թեան նախարարու-
թիւնը չէր հաստատած
մայնափիւռի կայա-
նին եւ օրաթերթին լու-
րերը:
Մոֆապ երկ հան-
դիպումը ունեցած էր
վարչապետ Արիէլ Շա-
րոնի եւ ապահովու-
թեան մարզի բարձ-
րաստիճան պաշտօ-
նատիրներու հետ,
քննարկելու համար
պաղեստինեան քա-
ղաքներէն հեռանալու
օրագիրը:
Մինչ այդ, պաղես-
տինցի եւ Իսրայէլացի
պաշտօնատարներ կը
պատրաստուէին հան-
դիպումի մը՝ վերջնա-
կանացնելու համար
Երիզովի եւ Քալիֆիայի
հարցը: Երկու պատ-
ւիրակութիւնները
քննարկած էին նաեւ
Այսրյորդանանի մէջ
Իսրայէլեան բանակին
անցարգելներուն
հարցը: Պաղեստինցի-
ները պահանջած էին,
որ անցարգելները

վերցուին եւ Իսրայէլ
վերջ տայ պաղեստին-
եան շրջաններուն դէմ
անհանդուրժելի միջո-
ցառումներուն: Պա-
ղեստինցիները նաեւ
պահանջած էին
պատրաստուիլ մօ-
տաւորապէս վեց հա-
զար բանտարկեալնե-
րուն:
Միւս կողմէ, պա-
ղեստինցի վարչապետ
Մահմուտ Ապպաս
հանդիպում կ'ունե-
նար արմատական
շարժումներու ներկա-
յացուցիչներու հետ,
ամրապնդելու համար
հաստատուած զինա-
դուրը:
Միացեալ Նահանգ-
ներու նախագահ Ճորձ
Պուշ Բասի, որ զինա-
դուրը պէտք է գոյատե-
ւէ, բայցեայնպէս մի-
եւնոյն ստեն պաղես-
տինեան իշխանու-
թիւնը պէտք է անդա-
մահատէ եւ քայքայէ
արմատական շարժու-
մը:
• ՊԱՂԵՍՏԻՆՅՅԻ
լրագրողներ դատա-
պարտեցին պաշտօ-
նակից Մապէն Տանա-
յի սպանութիւնը Իսրա-
յի մէջ: Լրագրողները
պարապ դազադ մը
բարձրացուցած՝ շրջե-
ցան Կապալի մէջ:

Հ. ԱԻՏՏ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՔԱՐԱՆ

Աստուծոյ պալիսնելով՝ 2003 - 2004 տարեշրջանի
սկզբնական արձանագրութիւնները, ճակիկն եւ նոր
աշակերտներու համար, սկսած են եւ կը շարունակ-
ւին մինչեւ 31 Յուլիս 2003, ամէն օր առաւօտեան ժա-
մը 8:30էն 1:00 (բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն):
Օգոստոս ամսուան ընթացքին գրասենեակը բաց է
միայն Չորեքշաբթի օրերը ժամը 8:30էն 12:00:

Նորեկ աշակերտներն կը պահանջուի՝
ա. Վերջին երկու տարուան վիճակագրոյց
բ. Ինքնուրեւն թուրքի լուսապատճեն
գ. Երկու նոր լուսանկար
դ. Բարի վարուց վկայագիր
ե. Նախկին վարժարանէն աշակերտին պետական
թիւը վաւերացուած:

ՎԵՐԱՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ տեղի պիտի ունենան
առաւօտեան ժամը 10:00ին:
• Չորեքշաբթի, 17 Սեպտեմբեր 2003 - Լեռնական
նիւթեր
• Շինգաբթի, 18 Սեպտեմբեր 2003 - Թուրքաբնու-
թիւն եւ գիտական նիւթեր
• Ուրբաթ, 19 Սեպտեմբեր 2003 - Պատմութիւն, աշ-
խարհագրութիւն եւ այլ նիւթեր

ՎԵՐԱՍՈՒՄ
ա. BREVET եւ BACC II Երկուշաբթի, 15 Սեպտեմ-
բեր 2003
բ. Երկրորդական, միջնակարգ եւ նախակրթարան -
Չորեքշաբթի, 1 Նոյեմբեր 2003
գ. Մանկապարտէզ - Շինգաբթի, 2 Նոյեմբեր 2003
Նկատի ունենալ հետեւեալները.
Գրայնագրութեան բաց է Երկուշաբթի, 8 Սեպտեմբեր
2003էն սկսեալ:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

«ԱԶԳԱԿ» - ՄՐՅԱՆԸ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ՄՐՅՈՒՄ

Ստորեկ կը ներկայացնենք «Ազգակ»-ի կազ-
մակերպած ընդհանուր զարգացման մրցումին
հինգերորդ հարցաւորը:
Այս հարցաւորին 5 հարցումներուն ձեռք
պատասխանողներէն վիճակաճգութեամբ պիտի
ընտրուի բախտաւոր մասնակից մը, որ պիտի
շահի Պէյրուս - Վառնա - Պէյրուս օդանաւային
տոմսակ մը:
Իւրաքանչիւր մասնակից կրնայ խմբագրա-
տուն ուղարկել միւլտիպլ մտուցը կրող միայն մէկ
կտրոն:
Մրցանքին մասնակցելու համար պէտք է օգ-
տագործել «Ազգակ»-ի էջերուն մէջ տեղադրուած
կտրոնը եւ ոչ լուսապատճեններ:
Շարքարանները պէտք է լեցուին եւ խմբա-
գրատուն ներկայացուին առաւելագոյնը Չորեքշաբթի,
20 Օգոստոս 2003, երկուշաբթի ժամը 18:00:

- ԿԱՐՑԱՐԱՆ ԹԻՒ 5
- 1.- Ո՞ր տեղի պիտի ունենան 2008ի Ողիմ-
պիական խաղերը:
 - 2.- Տիգրան Պետրոսեան ո՞ր մարզաձեւին մէջ
աշխարհի ախոյեան հանդիսացած է:
 - 3.- Ո՞վ էր «Վլետիցըր»-ի գլխաւոր լաւագոյն
ժապաւենի Օսթրա շահած դերասանը:
 - 4.- Չորս հայ անդամներ բաղկացած ռոքի ո՞ր
խումբը միլիոնաւոր ալպոմներ վաճառած է աշ-
խարհի տարածքին:
 - 5.- Ո՞վ է հեղինակը «My name is Aram» («Իմ
անունս Արամ է») գիրքին:

ԱՆՈՒՄ.....
ՍԱԿԱՆՈՒՄ.....
ԵՆՆԴԵԱՆ ԹՈՒՄԱՆ.....
ԵՆՈՒՄԱՆ ԹԻՒ.....

«ՎԱՆՅՅ ՉԱՅՆ»-Ի
ԱՅՍՕՐՈՒՄ
ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30.- Լիբանանեան
մամուլի խորագիրներու
ընթերցում՝ արաբերէն
9:00.- «Ռատիո -
Թատրոն». հեղինակ՝
Ճահանուր խոս. կը ներ-
կայացնեն Մարի Ռոզ
Մանուկեան եւ Մանուէլ
Մարգարեան
9:40.- «Առաւօտեան
տոմս»
10:05.- «Բժիշկին
Ետ». առողջապահա-
կան յայտագիր. հար-
ցագրոյց՝ տրք. Էլի
Թաշճեանի հետ. միւթ-
արեան գերմանացի
11:30.- Լիբանանեան
մամուլի խորագիրներու
ընթերցում՝ հայերէն
3:00.- Արաբերէն յայ-
տագիր. հարցազրոյց
աստղագէտ Մամուլի
Սատիի հետ
8:00.- «Ալօ Վանայ
Չայն». խաղ - մրցանք
ուղղակի ձայնասփռում

ՓՈԼԻԿԼՈԹ ՔՈԼԵՃԻ ԵՒ ԵՒ ԵՒ ԵՒ
ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԵԱՆՑ
ՊԱՏՈՒԱԲԵՐ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ
ՀԱՄԱԼԻԲԱՆԱԵԱՆ ԶՄՓԱՆԻՇՈՎ



- 1.- Վարչագիտական քարտուղարութիւն 100 %
- 2.- Մանկավարժութիւն 100 %
- 3.- Կանաչարգային առեւտրական գիտութիւն 89,8 %

Կամալիբանանեան յափանդով
Լեւոն Գեղոյ Պալեան 1325 միշով 3րդ դիրք
Եղսիկ Պողոս Սարգիսեան 1319 միշով 4րդ դիրք

Պետական քննութեանց յաջողած հայ ուսանող-
ներն են՝
Եղսիկ Սարգիսեան, Լեւոն Պալեան, Թամար
Շատճեան, Սարին Տօքմէճեան, Երան Զովաճի-
եան, Նայիրի Տաղեան, Զեփիւն Թոպայեան, Սեւ-
տար Թոնպուրեան, Լեւոն Շարապետեան, Նեմի
Սուլեյման, Անի Պալեան, Սարգիս Իմօրազեան,
Ռոզին Կարապետեան, Թամար Պողոսեան, Սարին
Տոտաբլեան, Սոհան Թեմէճեան, Թալին Արա-
համեան, Սոհան Գոսապետեան, Զնորիկ Կիւրեղեան,
Լուսին Մոմճեան, Նաբարի Թոնուկեան:

Զերմապէս կը շնորհակարտեմք մեր ուսանողներն
ու իրենց ծնողները:

ՓՈԼԻԿԼՈԹ ԶՈԼԵՃԻ
ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

Arabic header with logos and text: «السفر» «الاستقبال» «الذيار» «النهار» «الانوار»

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐՈՒԹԵՐԸ

Իրաքի մէջ «Ռոյ-
թըրք»-ի թղթակիցին
սպանութեան հարցը
է անոր շուրջ բարձ-
րացած աղմուկը, իս-
րայէլեան ուժերուն
հեռացումը պաղես-
տինեան քաղաքներէն
է անոր դիմաց կանգ-
նած խնջընդոտները
կը հանդիսանան
երկուսն լիբանան-
եան օրաթերթերուն
գլխաւոր լուրերը: Մի-
ջապագային այլ լուրե-
րու կարգին թերթերը
անդրադարձած են
Սէնտակաս Արաբիոյ
մէջ ծայր առած ահա-
բեկչութեան դէմ պայ-
քարին եւ Իրանի կա-
ռավարութեան կողմէ
Իսրայէլի ուղղուած
պոռնակները:
Լիբանանեան լու-
րերու կարգին հիմնա-
կան տեղ կը գրաւէ
պաղեստինեան իշխա-
նութեան արտաքին
գործոց նախարար
Նապիլ Շաաթի Լիբա-
նան այցելութիւնը եւ
նախագահ Կոր. Լա-
հուտի հետ ունեցած
հանդիպումը:
Թերթերը լուսար-
ձակի տակ առած են
նաեւ Լիբանանի հա-
կապեցութիւնը իսրա-
յէլեան ունեցած իրա-
նութեան մարզի
հարցերու լուծման
համար առնուած մի-
ջոցառումները:
Օրաթերթերուն
առաջին էջերուն վրայ
հիմնական տեղ կը
գրաւէ նաեւ արաբ
«Մուֆիթը» Տիւ-
նա Բարապուի յաղ-
թանակը:

անոր վիճակը ահաւոր
է եւ ան կը գտնուի
«մահուան բանտ»ին
մէջ:
Ըստ «Հայաթ»-ի, իս-
րայէլեան զինուորա-
կան հաստատութիւն-
ներուն կատարած
խախտումները շփոթի
կը մատնեն հեռաց-
ման գործընթացը եւ
կը բարդացնեն առկայ
հարցերը:
«Լիւուր»-ի համա-
ձայն, Ապպաս կրկին
երկուսուրեան կը
սկսի արմատական
խմբակցութիւններուն
հետ, իսկ իսրայէլեան
նոր ցանկապատ մը կը
քարին եւ Իրանի կա-
ռավարութեան կողմէ
Իսրայէլի ուղղուած
պոռնակները:
«Անուար» նշած է,
թէ Իսրայէլ անցարգել-
ները պատճառաբա-
նելով կը փորձէ իսա-
զարէլ հեռացման գոր-
ծընթացը:

Ըլլայ էլեկտրականու-
թեան հարցով:
Թերթը գրած է, թէ
Հըրպալլա եւ Իսրայէլ
կը հաստատեն, որ գե-
րիներու հարցով բա-
նակցութիւնները պի-
տի վերակսին:
Միջազգային եւ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՅԼ
ԼՈՒՐԵՐ
«Նահար»-ի համա-
ձայն, Ֆահտ Թագաւոր
կը հաստատէ, որ Էմի-
րութեան մէջ ահաբե-
կիչներուն դէմ պայ-
քար պիտի շարու-
նակուի: Ըստ թերթին,
Սէնտակաս Արաբիա
խիստ օրէնքներ ու
պատիժներ պիտի
տնօրինէ վեղծարա-
րութիւններ կատա-
րողներուն դէմ:
«Նահար» դիտել
տուած է, թէ Սուրիան
հաշուետուութեան
կանչելու առաջարկը
ներկայացնող ամերի-
կացի դատաւ է, որ
մեծամասնութիւնը իր
կողմին է:
«Սաֆիր» նշած է, թէ
Դամասկոսի մէջ Մա-
հաթի յայտարարեց,
որ Իսրայէլ արաբնե-
րուն շատ բիրտ ռճով
եւ բռնարարքներով
պատասխանեց, եւ
պոռնակներ իսլամա-
կան պետութիւններու
յաջորդաբար անկումէ:
Ըստ թերթին, Տրան-
սա կը նախատեսէ
լիպիական յաւելեալ
հատուցումներ, իսկ
Լոնտոն պատճառի-
չոցները վերցնելու
առնչութեամբ իր ծրա-
գիրը կը ներկայացնէ:
«Մուսաբապալ»-ի
համաձայն, Պրեմըր
յայտարարած է, որ
Իրան կը միջամտէ
Իրաքի եւ Սուրիոյ
հարցերուն եւ ահաբե-
կիչներուն արտօնու-
թիւն կու տայ իր հողե-
րուն վրայ մնալու:
«Անուար» դիտել
տուած է, որ Լոնտոնի
մէջ գտնուող ուսում-
նասիրութեան կեդրոն
մը կը նախատեսէ 11
Թերթը նշած է, թէ 20
Օգոստոսը վճռական
է գործնական պիտի
կրկնութիւն:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ
ԼՈՒՐԵՐ

«Անուար» գրած է,
թէ բանակը էլեկտրա-
կանութիւնը կրկին
պիտի վերադարձնէ
«օրէնք»:
Ըստ «Սաֆիր»-ի, Լա-
հուտ Շաաթի հետ
քննարկեց պաղես-
տինցի գաղթականե-
րու հարցը եւ շեշտեց,
թէ ոչ մէկ ձեւով պիտի
ընդունի պաղեստին-
ցիներուն մնալու կե-
ցութեան ընտրանքը:
«Սաֆիր» օրաթերթը
գրած է, թէ էլեկտրա-
կանութեան բացերը
պիտի փակուին որոշ
յատկացումներով եւ
փոխատուութիւննե-
րով, իսկ շրջաններու
քաղաքապետութիւն-
ները աշխատանքի
լծուած են օրինապա-
կութիւնները բացա-
յայտելու համար:
Ըստ «Նահար» օրա-
թերթին, էլեկտրակա-
նութեան թղթածրա-
րին քաղաքական
ծածկը ապահովուե-
տի, իսկ ահաբեկչա-
կան ուժերը նեցուկ
կանգնեցան անոր:
Օգոստոսը վճռական
է գործնական պիտի
կրկնութիւն:

«ՌՈՅԹՐԵՂ»-Ի
ԹՂԹԱԿԻՑԻ
ՄՊԱՆՈՒԹԻՒՆ
ԵՒ ԱՅԼ
ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ

«Նահար» օրաթեր-
թը գրած է, թէ միջապ-
գային ընտանիքը կը
պահանջէ բացայայ-
տել «Ռոյթըրք»-ի
թղթակիցին սպանու-
թեան ծայրերը, իսկ
Ռաշիկընը կը պա-
հանջէ առանձին հար-
ցաքննութիւն կատա-
րել այս առնչութեամբ:
Ժապարի կը խոս-
տանայ յառաջիկայ 6
ամիսներու ընթացքին
սահմանադրութիւն
մշակել եւ գործադրել,
իսկ Պրեմըր Սատտան
Հիւսէյնի հետեւորդ-
ները կ'ամբաստանէ
երկրին տնտեսու-
թիւնը քայքայելու
յանցանքին համար:
«Անուար» դիտել
տուած է, թէ 12 ամերի-
կացի զինուորներ
սպանուեցան Թիւր-
քի մէջ զինուորա-
կան պահեստանոցի մը
մէջ պատահած պայթու-
մին պատճառով:

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ
ՇՐՋԱՆԱՆԵՐԸ
ԻՐԱՅՅԵԱՆ
ՈՒՑՐՈՒ
ԵՆՈՒՄԱՆ ԿԱՐՑ

«Մուսաբապալ»
օրաթերթը գրած է, թէ
համաձայնութիւնը
շատ յստակ կերպով
խախտեցաւ, իսկ պա-
ղեստինցիները չեն
ընդունիր ձեւական
հեռացումները:
Ըստ թերթին, Պար-
զուրի փաստաբան-
ները անոր այցելելէ
ետք յայտնած են, թէ

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ
ԼՈՒՐԵՐ

«Անուար» գրած է,
թէ բանակը էլեկտրա-
կանութիւնը կրկին
պիտի վերադարձնէ
«օրէնք»:
Ըստ «Սաֆիր»-ի, Լա-
հուտ Շաաթի հետ
քննարկեց պաղես-
տինցի գաղթականե-
րու հարցը եւ շեշտեց,
թէ ոչ մէկ ձեւով պիտի
ընդունի պաղեստին-
ցիներուն մնալու կե-
ցութեան ընտրանքը:
«Սաֆիր» օրաթերթը
գրած է, թէ էլեկտրա-
կանութեան բացերը
պիտի փակուին որոշ
յատկացումներով եւ
փոխատուութիւննե-
րով, իսկ շրջաններու
քաղաքապետութիւն-
ները աշխատանքի
լծուած են օրինապա-
կութիւնները բացա-
յայտելու համար:
Ըստ «Նահար» օրա-
թերթին, էլեկտրակա-
նութեան թղթածրա-
րին քաղաքական
ծածկը ապահովուե-
տի, իսկ ահաբեկչա-
կան ուժերը նեցուկ
կանգնեցան անոր:
Օգոստոսը վճռական
է գործնական պիտի
կրկնութիւն:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ
ԼՈՒՐԵՐ

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ
ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ
ԿՈՉ
Զառասուցիկաճանաչ հայուհի մը, մայր երեք
զաւակներու, շուտով պիտի ենթարկուի սուրբծու-
ծի պատուաստումի գործողութեան (Bone Marrow
Transplantation): Պատուաստումը պիտի կատար-
ի երիտասարդ զաւկի ոսկրածուծն:
Վերոյիշեալ գործողութիւնը Լիբանանի մէջ կա-
տարելու անկարելիութեան պատճառաւ գործողու-
թիւնը պիտի կատարուի Իտալիոյ Փերուճիա քա-
ղաքին մէջ: Ընդհանուր ծախս նախատեսուած է
շուրջ՝ 60,000 եւրօ (այսինքն՝ 68,000 ամ. տո-
լար):
Ենթակային առողջական վիճակը կը պահանջէ
անյապաղ հասնիլ գործողութեան, որուն համար
կանխավճար կը պահանջուի ընդհանուր ծախսին
30 %, շուրջ 20,400 ամ. տոլար:
Ընտանիքին, լիբանանեան եւ հայկական բարե-
սիրական հաստատութիւններու եւ կազմակերպու-
թիւններու ձգտողով ցարդ գոյացած է 13,000 ամ.
տոլար:
Կապ հաստատուած է նաեւ Լիբանանի մէջ իտա-
լական դեսպանատան հետ, որպէսզի կեցութեան
դիրտութիւններ ընծայուին մօր ու զաւկին:
Ամբողջական գումարը գոյացնելու համար կոչ
կ'ուղղուէր գաղութի բարեւեր ազգայիններուն՝ մաս-
նակցելու այս առիթով սկսած հանգամանակութեան,
փրկելու համար կենցաղը երիտասարդ հայ մօր մը:
ՀԱՆԱԵԱՆԻ ԾԻՈՂՆԵՐԸ ՄԸ ՓՐԿԵՆԵՆ:
Մասնակցի փափաքողներն կը խնդրեն ան-
յապաղ իրենց նուիրատուութիւնները կատարել՝
ԱՅՏՏ «Կեանք մը Փրկենք» ֆոնտին, կամ կապ
հաստատել ԼՕՍԻ Արաբի Պուլուրճեան ընկե-
րաթղչական կեդրոնի եւ Ժնիւշեան Յիշատակի
Զեռարկի Ընկերային Ծառայութեան գրասենեակ-
ներուն հետ, առաւելագոյնը մինչեւ Շաբաթ, 30
Օգոստոս 2003:

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ
ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ

Կոչ
Զառասուցիկաճանաչ հայուհի մը, մայր երեք
զաւակներու, շուտով պիտի ենթարկուի սուրբծու-

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՇԽԱՐՆԷՆ

ԱՆԳՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐԵԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԱՂԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԸ

«Հայաստանը ԱՊՀի անդամ երկիրներէն առաջինն է, որ անդամակցած է Գաղթի Միջազգային կազմակերպութեան: Շուտով կ'աւարտի անդամակցութեան 10-ամեակը, եւ կազմակերպութիւնը կը նախատեսէ զայն նշել: Յոյս ունինք, որ մինչ այդ կ'ուսնենանք կատարուած աշխատանքի արդիւնքները լայն հասարակութեան ներկայացնելու կարելիութիւն», յայտնեց Գաղթի Միջազգային կազմակերպութեան Հայաստանի առաքելութեան նոր նշանակուած ղեկավար Մարթին Վիտի՝ վարչապետ Անդրանիկ Մարգարեանի հետ ունեցած հանդիպման ընթացքին: Կազմակերպութեան Հայաստանի առաքելութեան ղեկավարը եւ վարչապետը զրոյցի ընթացքին նշեցին Համագործակցութեան զարգացման կարեւորութիւնը: Վարչապետը յանձնարարեց կառավարութեան առընթեր տեղափոխութեան եւ գաղթականներու վարչութեան պետին՝ նախապատրաստել Հայաստանի կառավարութիւնը պատրաստ է սերտօրէն գործակցելու նաեւ Գաղթի Միջազգային կազմակերպութեան ոլորտները:

Հանդիպման ընթացքին վարչապետ Ա. Մարգարեան ներկայացուց գաղթականներու խնդիրներուն լուծման ուղղութեամբ կառավարութեան ձեռնարկած քայլերը, ՄԱԿի Գաղթականներու հարցերով գերագոյն յանձնակատարի (UNHCR) գրասենեակի հետ գործակցութեան եւ միացեալ ծրագրերով լուծուած հարցերը՝ նշելով, որ Հայաստանի կառավարութիւնը պատրաստ է սերտօրէն գործակցելու նաեւ Գաղթի Միջազգային կազմակերպութեան հետ:

Իսկ Գաղթի Միջազգային կազմակերպութեան Հայաստանի առաքելութեան ղեկավարը հաստատեց իր կազմակերպութեան Հայաստանի հետ գործակցութիւնը աւելի արդիւնաւէտ, հրապարակային եւ համակարգուած դարձնելու ցանկութիւնը:

ՎԱՐՉԱՊԵՏ ԱՆԳՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍՓԻՌՔԱԿԱՅ ՌԵՍՈՒՑԻՆՏՆԵՐՈՒ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան վերջերս ընդունեց Հայաստանի մէջ վերադարձուող ման հետեւած եւ 11 երկիրներէ եկած սփիւռքահայ ուսուցիչներու պատուիրակութիւնը:

Վարչապետը, նշելով վերջին տարիներուն Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման ուղղութեամբ Հայաստանի իշխանութիւններու կողմէ գործադրուող ճիշդ, կարեւորութեամբ ընդգծեց սփիւռքահայ դպրոցի պահպանման, սերունդներու հարցի կրթութեան, ազգային ոգիով պատարակութեան խնդիրները: Ան անդրադառնալով Սփիւռքի Հայ մանուկներուն մէջ Հայաստանի, անոր անկախ պետականութեան, հայրենիքի զօրացման նկատմամբ հաւատքի ու վստահութեան սերմանման անհրաժեշտութեան, նշեց. «Սփիւռքահայ երեխան պէտք է տուրուած ըլլայ Հայաստանի հզօրացման գաղափարով: Պետութեան անվտանգութեան հիմքը ոչ միայն բանակն է, այլ նաեւ՝ կրթութիւնը»:

Անդրանիկ Մարգարեան անուրանալի եւ անփոխարինելի նկատեց սփիւռքահայ ուսուցիչներուն դերը այդ հիմնախնդիրներու լուծման շարունակական գործընթացին մէջ՝ նշելով, որ հայրենիքի մէջ ուսուցիչներու մասնագիտական վերադարձուումը անոր կարեւոր բաղադրանքներէն է:

2003Ի ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄԵԱԿԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆԱԾ ԵՆ 6,126 ԲՈՆԱԳԱՂԹԱԾՆԵՐ

Մինչեւ հիմա Հայաստանի քաղաքացիութիւն ստացած է Ազրբայձանէն բռնազաղթած 62 հազար հոգի: Հայաստանի կառավարութեան աւրելի տեղափոխութեան եւ գաղթականներու վարչութիւնը կը յայտնէ, որ այս գործընթացը վերջին տարիներուն բաւական աշխուժացած է. այսպէս, եթէ մինչեւ 1999 քաղաքացիութիւն ընդունած էր 7 հազար մարդ, ապա միայն այս տարուան առաջին կիսամեակին այդ թիւը կը կազմէ 6,126:

ԼԵՈՆԱՅԻՆ ԳԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆԸ ՔՆՆԱՐԿԱԾ Է ՅԱՌԱՋԻԿԱՅ ՆՍԱՄԱՐՁԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

15 Օգոստոսին Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան Ազգային ժողովի փոխ նախագահ Մուշեղ Օհանյանեանի նախագահութեամբ տեղի ունեցած խորհրդակցութեան ընթացքին, քննարկուեցաւ Ազգային ժողովի Ղրբ նստաշրջանի օրէնսդրական գործունէութեան ծրագրի եւ Սեպտեմբերի լիագումար նիստի նախապատրաստման հարցը:

Նիստին ընթացքին խորհրդարանի մնայուն յանձնախումբերու նախագահները ներկայացուցին պատգամաւորներու կամ կառավարութեան կողմէ ներկայացուած օրինագիծերը:

ԽՏԱՍԱԼԻԿ ՆՈՒՐՈՒՄԸ ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ

Վերջերս լոյս տեսաւ Պարոյր Սեւակի նուիրուած խոսասյուրի մը՝ 29 ձայնագրութիւններով: Բարձր ներսիսեան, Մհեր Մկրտչեան, Հրաչուհի Զինանեան, Վլատիմիր Ապահեան, Գ. Մալիկեան եւ ուրիշներ, ինչպէս նաեւ ինք՝ Պ. Սեւակ (յետ մահու) այս խոսասյուրիով ներկայացուեցան եւ փունջ մը Սեւակի ստեղծագործութիւններէն:

Խոսասյուրիի հրապարակման նախաձեռնողը բանաստեղծ Վարուժան Նաստուրն է՝ նպատակ ունենալով պահպանել եւ տարածել հայ նշանաւոր եւ սիրուած մշակութային գործիչներուն ձայները:

Խոսասյուրիին մէջ ընդգրկուած է նաեւ Վազգէն Ա. կաթողիկոսի յիշատակի խօսքը՝ Պ. Սեւակի հոգեհանգիստի ժամանակ: Խոսասյուրիկը լոյս տեսած է Կիրոսի մէջ՝ օժանդակութեամբ տեղւոյն թեմի կաթողիկոսական փոխանորդ Վարուժան արք. Հերկելեանի:

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ՆՇՈՒՅՑԱԻ ՄԻԱՍԱՆԹՈՅԻ ԾՆՆԴԵԱՆ 125ԱՄԵԱԿԸ

«19րդ դարու վերջաւորութեան եւ 20րդ դարու սկիզբը հայ ժողովուրդի արգանդը, ինչպէս կ'ասեն մեծն Պարոյր Սեւակը, արտակարգօրէն բեղմնաւոր եղաւ. ծնան գրական կարկառուն դէմքեր, մեծ անհատականութիւններ՝ կազմելով իսկական հոկայական աստղաբոլոր մը: Եւ ուհա այդ փայլատակող աստղերէն մէկն ալ նոյնիստ մեծն Միամանթոն է (Ատոմ Եարճաճեան, 1878-1915)՝ ինքնատիպ բանաստեղծ մը, որուն, յոյս ունիմ, այսօր մենք կը կարենանք ըստ ամենայնի ոգեկոչել»:

Հենրիկ Բախչինեանի ներածական այս խօսքերով 15 Օգոստոսին Երեւանի Եղիշ Զարեհի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանին մէջ բացուած կատարուեցաւ Միամանթոյի ծննդեան 125ամեակին նուիրուած հանդիսութեան:

Հ. Բախչինեանի համաձայն, Միամանթոն իր ժամանակին կրցաւ մեր բանաստեղծութիւնը բարձրացնել եւրոպական եւ ֆրանսական գրականութեան մակարդակին, ան ձեւ տուաւ հայ ազատաշար բանաստեղծութեան:

Բանաստեղծի 1915ին եղբրական-օրէն ընդհատուած կեանքին ու ստեղծագործութեան, «Դիցազնօրէն», «Հայրդիններ», «Հոգեվարքի եւ յոյսի ջահեր», «Կարմիր լուրեր բարեկամէս», «Հայրենի հրաւէր» ժողովածուներուն ու բանաստեղծական շարքերուն, որոնք ըստ զեկուցողի, կը հաստատեն գաղափարի բանաստեղծի յայտնութիւնը: «Անոր քերթութեանը հայ երիտասարդութեան ուղղուած պատգամներ են: Ան պատմութեան դասերուն մէջ խոսեցուցած է դարերու վրէժը եւ ազատագրական պայքարի կոչ ուղղած է հայուն, անոր մաքառումները յուսովաւելով կեանքի եւ գոյութեան, պատուի եւ արդարութեան իտէպի հաւատով», ըսաւ Հ. Բախչինեան:

Միամանթոյի անմահ յիշատակին երախտագիտութեան խօսք ըսին գրականութեան եւ արուեստի թանգարանի փոխ տնօրէն Գուրգէն Գասպարեան, Հայաստանի Գրողներու Միութեան քարտուղար բանաստեղծ Յովիկ Հովէեան եւ ուրիշներ:

ԸՆԿ. ԱՂՈՒՆ ՎԱՐԳԱՆԵԱՆ ԿԸ ԲԱՅԱՅԱՅՏԷ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԻ ԶԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի ընկերային ապահովութեան նախարար ընկ. Աղուան Վարդանեան Ուրբաթ, 15 Օգոստոսին յայտնեց, թէ անցնող տարիներուն ընթացքին նախարարութեան մէջ կատարուած են անպարկեշտ արարքներ՝ յատկապէս ինչ կը վերաբերի աղքատ խաւին պետական յատկացումներու բաշխումի գործին մէջ: Ան ազդարարեց նախարարութեան պաշտօնէութեան, որ կարծի քայլեր պիտի առնէ կացութիւնը դարմանելու համար:

Երեւանի մէջ, նախարարութեան քանի մը հարիւր պաշտօնեաններուն առջեւ խօսք առնելով, նախարար ընկ. Աղուան Վարդանեան յայտարարեց, թէ «չարաչափութեան, ապօրինութիւններու եւ կոչուակերութեան որոշ շրջաններումներ կան այս (Ընկերային ապահովութեան) ոլորտին մէջ եւս»: Ան աւելցուց. «Կ'ուզենք վստահ ըլլալ, թէ անոնք որոնք կանոնաւոր եւ ճիշդ ձեւով չեն գործեր եւ սխալներ կ'ունեն, պէտք է զիտակցին, որ գործ ունին ամէնէն անպաշտպան եւ ամէնէն աղքատ խաւին հետ: Անարդարութիւն պէտք չէ ըլլայ այս ոլորտին մէջ»:

Ընկ. Աղուան Վարդանեան, որ անցնող Յունիսին նախարար նշանակուեցաւ, մասնաշատուկ կերպով խնդրոյ առարկայ դարձուց պետական նպատէ օգտուողներու ցուցակին հաւաստիւթիւնը: Ըստ այս ցուցակին, մօտաւորապէս 139 հազար ընտանիքներ ամսական 7600 դրամ պետական նպաստ կը ստանան: Երկար տեւել է ի վեր կասկածներ կային, թէ այս ցանկին վրայ կան ընտանիքներ, որոնք աղքատ չեն եւ կաշառքով ներառուած են ցուցակին մէջ: 2001ին կատարուած ուսումնասիրութեան մը համաձայն, Հայաստանի ամէնէն աղքատ խաւին 10 առ հարիւր կը ստանայ պետական նպաստներուն միայն 6,5 առ հարիւրը:

ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ԴԵՏ ՍՊԱՆԵՐ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՅԻՆ «ՄԵՏՔԵՕՐ/ՌԵՍՔԻՆՏԻՐ-2003» ՈՒՋՄԱՓՈՐՉԻՆ

ՕԹԱՆԻ «Գործակցութիւն յանուն իսլաղութեան» ծրագրով նախատեսուած «Մետքէօր/Ռեսքէօր-2003» բազմազգ ուղեւորութիւնները, որոնք յետաձգուած էին իրաքի իրադարձութիւններուն պատճառով, տեղի պիտի ունենան 8 - 21 Սեպտեմբերին:

Ռազմափորձերուն պիտի մասնակցին Միացեալ Նահանգներ, Վրաստան, Ալպանիա, Պուլկարիա, Գերմանիա եւ այլն, իսկ Ազրբայձան եւ Հայաստան՝ ղէտեր զրկելով:

«Մետքէօր/Ռեսքէօր-2003» ուղեւորութեան եւ համակարգչային հաղորդակցութեան ուղեւորութիւններուն համար Վրաստանի պաշտպանութեան նախարարութիւնը յատկացուցած է Թիֆլիսի մօտ գտնուող Վաղարշի խարխուր:

Հակառակ Վրաստանի եւ Ամերիկայի բազմաթիւ առաջարկներուն, Ռուսիա որոշած է չմասնակցիլ:

ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒՆԵՐ 1512 ԳՊՐՈՑ

2002 - 2003 կրթական տարեշրջանին ընթացքին 523,079 աշակերտներ յաճախած են 1481 պետական եւ 31 ոչ պետական դպրոցներ: Ըստ Ազգային վիճակագրական ծառայութեան տուեալներուն, պետական դպրոցներուն մէջ ուսում ստացած են 520,579 աշակերտներ, իսկ ոչ պետական դպրոցներուն մէջ՝ 2500 աշակերտներ: Հայաստանի դպրոցներուն մէջ անցնող տարի գասուանդած են 55,386 ուսուցիչներ:

ԱՉՐՊԵՅՃԱՆՑԻ ՄԱՔԱՆԵՆԳԸ ԴԱՍԱՊԱՐՏՈՒՅՑԱԻ 5 ՏԱՐՈՒՆ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ

Տաւուշի մարզի առաջին ատենի դատարանը 5 տարուան բանտարկութեան դատապարտեց Վրաստանի Մառնէուլի շրջանի Սատախոյ գիւղի ազգութեան արգելձանցի էլտար Մուսթաֆաեւը: Յանցագործը 20 Մայիսին ղէպի Բազրատաշէնի շուկայ 8,5 կրամ հաշիշ տեղափոխելու ժամանակ ձեռնարկուած էր տեղւոյն ոստիկանութեան կողմէ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՍՏԱՏԵՑ ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԻ ՄԷԿ ՓՈՒԼԸ

Հայաստանի համաձայնական կառավարութիւնը իր հերթական նիստին ընթացքին հաստատեց երկրի 2004-2006ի պետական միջին ժամկէտով ծախսերուն ծրագիրը: Ըստ կառավարութեան մամուլի գրասենեակին, փաստաթուղթը աղքատութեան յաղթահարման ուղեւորական ծրագրի իրականացման փուլերէն մէկն է եւ կը պարունակէ հանրապետութեան ընկերային-տնտեսական, մշակութային զարգացման հիմնական հարցերը, եւ հիմք պիտի հանդիսանայ 2004ի ու յաջորդ երկու տարիներու պետական պիւլետէներուն համար: Այս ծրագրիին համաձայն, ուսուցիչներու միջին աշխատավարձը 2004ին պիտի դառնայ 30 հազար դրամ (մօտ 51 տոլար), իսկ 2006ին՝ 60 հազար դրամ:

Նիստին ընթացքին, կառավարութիւնը լրացումներ կատարեց 6 Փետրուարին տրուած ձեռք բերուած օգնութեան եւ սպասարկումի որոշումին մէջ:

Կառավարութիւնը վաւերացուց «Անհատական ծածկագրերու մասին» Հայաստանի օրէնքին մէջ փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու վերաբերեալ օրինագիծը, որ պիտի ներկայացուի Ազգային ժողով:

Ուրիշ որոշումով մը փոփոխութիւններ կատարուեցան կառավարութեան 21 Յունիս 2001ին տրուած «Հայաստանի Հանրապետութեան տարածքին Հայաստանի Հանրային պատկերասփիւռի կայանի յայտագրիներուն սփռումը ապահովող միջոցառումներուն մասին» որոշման մէջ:

Նիստին ընթացքին կառավարութիւնը ընդունեց եւ հաստատեց շարք մը այլ որոշումներ:

Կառավարութեան նիստին ետք, ընկերային ապահովութեան նախարար ընկ. Աղուան Վարդանեան լրագրողներուն յայտնեց, որ անհատական ծածկագրիներուն գծով փոփոխութիւնները կատարուած են օրէնքի շուրջ հասարակութեան եւ Հայ Առաքելական եկեղեցու մօտ ծագած որոշ խնդիրները լուծելու նպատակով: Ըստ նախարարին, ինչպէս օրէնքը պիտի վերանայնուի «Ընկերային ապահովութեան քարտերու մասին» անունով, իսկ «անհատական ծածկագիր» ձեւակերպումը պիտի փոխարինուի «ընկերային ապահովութեան քարտ»ով:

Նախարարը յայտնեց նաեւ, թէ թուագրումը առայժմ կամաւոր է, իսկ 1 Յունիս 2004էն սկսեալ պիտի գործադրուի պարտադիր կերպով:

ՈՐՈՏԱՆ-ԱՐՓԱ ՓԱՊՈՒԴԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՅԻՆ ՀՈՎՏԵՐԵՐԻՆ

Մինչեւ Հոկտեմբերի վերջը պիտի աւարտի 21,6 քիլոմետր երկարութեամբ Որոտան-Արփա փապուղիի կառուցումը, որ կարելիութիւն պիտի ընձեռէ Որոտան գետի ջուրը (տարեկան 165 միլիոն խորանարդ մետր) Կեչուտի ջրամբարով եւ Արփա-Սեւան փապուղիով հասցնելու Սեւանայ լիճ:

Ըստ Հայաստանի քաղաքայինութեան նախարարութեան, Արփա-Սեւան փապուղիի 2001-2003 տարիներու շինարարական աշխատանքներուն համար պետութիւնը յատկացուցած է 7,2 միլիարդ դրամ:

ԵՐԿՐԱՇԱՐԺ ԱՐՅԱՍԻ ԵՒ ԱՉՐՊԵՅՃԱՆԻ ՄԱՀՄԱՆԻՆ ՎՐԱՅ

Ըստ Հայաստանի երկրաշարժներէ պաշտպանութեան ազգային ծառայութեան, Երկուտ քաղաքի, 18 Օգոստոսին, Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ Ազրբայձանի սահմանին՝ Ստեփանակերտէն 40 քիլոմետր ղէպի հիւսիսարեւելք, տեղի ունեցած է 4 ստիւծան ուժգնութեամբ երկրաշարժ:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԳԵՍՊԱՆՍԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ ԱԽԱԼՔԱԼԱՔ

22 Յունիսին, Ախալքալաք կը գտնուէր Վրաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատան պատուիրակութիւնը՝ ղեսպանի տեղակալ Փաթրիսա Մ. Օլլրի գլխաւորութեամբ:

Ախալքալաքի շրջանի վարչութեան ղեկավարներուն, ինչպէս նաեւ՝ շրջանին մէջ գործող ոչ կառավարական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ պատուիրակութեան ունեցած հանդիպումին ընթացքին քննարկուեցան Զաւախքի մէջ առկայ քաղաքական, ընկերային-տնտեսական, կրթամշակութային հարցերը եւ Միացեալ Նահանգներու կառավարութեան դիրքորոշումը անոնց նկատմամբ:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ»Ի ՎԵՐՁԻՆ ՀԱՏՈՐԻ ՀՐԱՍԱՐԿՈՒԹԻՒՆԸ

«Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան նիւթական օժանդակութեամբ 3 հազար տպագրանակով լոյս տեսած է «Հայկական համառօտ հանրագիտարան»ի վերջին՝ չորրորդ հատորը, որ կ'ընդգրկէ շուրջ 3760 յօդուած:

Հանրագիտարանի հրատարակութեան աշխատանքները սկսած են 1988ին: Առաջին հատորը լոյս տեսած է 1990ին, երկրորդը՝ 1995ին, երրորդը՝ 1999ին: Ըստ «Հայկական հանրագիտարան»ի գլխաւոր խմբագիր-տնօրէն Յովհաննէս Այվազեանի, չորրորդ հատորը շուրջ 15 տարիներ տեւած աշխատանքներու ամփոփումն է:

Ընթացող յանձնուող հալագիտական ուղղուածութեան այս քառահատորը հանրագիտարան է Հայաստանի, հայկական ընաշխարհի, պատմութեան, հայ ժողովուրդի ու հայ իրականութեան մասին:

«ԱԶԳԱԿ»Ի ՄԷՉ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որբէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագրի խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակչին թուականէն առնուագ օր սը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻՆԻ ՕՒՍԸ 5:00: ՄԱՀԱՋԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահագո կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այլքան ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ՀԱՅ - ՓՈՐԹՈՒԳԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԳԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԳԱԿՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Հայ - փորթուգալական առևտրական յարաբերությունները ժե- դարէն սկսեալ զարգացան յատկապէս Հնդկաստանի մէջ. այնուհետեւ, եթովպիոյ կողմէ փորթուգալ ուղարկուած հայազգի Մատթէոսի ղեկավարութեան միջոցով փորթուգալ յարաբերութեան մէջ մտաւ Եթովպիոյ հետ եւ հետագային մեծ դեր ունեցաւ օտար նուաճողներէ անոր ազատագրութեան մէջ:

ՀԱՅԱՉԳԻ ՄԱՏԹԵՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ՓՈՐԹՈՒԳԱԼ ԵԹՈՎՊԻՈՅ ՕԹԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՀՄԱՐ

Փորթուգալ ափրիկեան կարգ մը երկրամասերու, Պրագրիլի, Հնդկաստանի եւ անոր յարակից վայրերու ու կղզիներու գաղութացումէն եւ ովկիանոսներու վրայ գերակշռութեան հաստատումէն ետք հզօր կայսրութիւն դարձած էր: Նոյն ժամանակ զօրացած օսմանցիք կը դառնային փորթուգալցիներուն մրցակից՝ սպանալով ծովային ուղիներու եւ Հնդկաստանի ճամբու ապահովութեան, իսկ քրիստոնեայ Եթովպիան կենաց մահու պայքար կը մղէր իսլամ նուաճողներուն դէմ:

Արդարեւ, Հարարի էմիրը՝ Ահմէտ Իպն Իպրահիմ Ղազի, Կրան (ձախլիկ) անունով ծանօթ, իրեն միացնելով սոմալի եւ աֆար ցեղախումբեր՝ յարձակեցաւ Եթովպիոյ քրիստոնեայ շրջաններուն վրայ, անխնայ աւերելով, քանդելով ու կողոպտելով քրիստոնեայ բնակավայրերը եւ զանգուածաբար ջարդելով քրիստոնեաները:

Կարգի ասպետի աստիճան եւ զգեստ ստացաւ թագաւորը միաժամանակ առատ նուէրներ տուաւ անոր:

Մատթէոս եւ փորթուգալական ղեկավարութիւնը քսանչորս ռազմականերով ճամբայ ելան Լիզպոնէն եւ հասան Հնդկաստան, ուրկէ ծովակալ Տիեկօ Լոպէս Սեգուէլայի նաւատորմով 16 Ապրիլ 1520ին հասան Եթովպիոյ ծովափնայ Մասաուա կղզին: Յամաք ելլելով՝ անոնք հասան Արքուիէտօ, ուր բնակիչներուն եւ Փիսանի վանքի վանականներուն կողմէ դիմաւորուելէ ետք, լեռներու ու անտառներու մէջէն ճամբորդելով հասան Ս. Միքայէլի վանքը, ուր ընդունեցան վանականներուն կողմէ: Հոնկէ ճամբայ ելլելէ ետք Մատթէոս տարափոխիկ տենդէ բռնուելով մահացաւ 48 ժամ ետք, Արգիզոյի Տեքոնա քաղաքին մէջ, 23 Մայիս 1520ին: Անոր մահը պատճառ եղաւ փորթուգալական ղեկավարութեան ձախողութեան, որովհետեւ միջոցորդ թարգման մը չունէին. պատգամաւորութիւնը հինգ տարի մնաց Եթովպիա եւ յետոյ վերադարձաւ:



Մանուէլ (Էմանուէլ) թագաւոր, որուն օրով մեծ նուաճումներ կատարուած եւ ովկիանոսային ուղիներ յայտնաբերուած էին, մահացաւ 1521 Դեկտեմբերին, Լիզպոնի մէջ Եթովպիոյ վանքին մէջ թաղուեցաւ՝ արժանանալով «նուաճողներու, նաւադնացիներու եւ Հնդկաստանի, Արարիոյ ու Պարսկաստանի առեւտուրի տէր» կոչումին:

